

ձանց ու հաստատութիւնների խնամքին յանձնուին, բայց խմբագրութիւնը աղնուարար նկատել էր, որ անիրաւացի կլինէր այդպիսով անմեղ արարածներին իրենց մայրնի հողից կտրել և օտար շնչով սնուցանել: Ուստի թղթակիցը առաջարկում է օգնել Զմիւռնիայում արդէն գոյութիւն ունեցող Գերմանական որբանոցին և եթէ կարելի է նոր այդպիսի որբանոցներ ևս հիմնել: Այդ որբանոցի համար խմբագրութիւնը վաղուց հանգանակութիւն էր բաց արել, բայց տաճիկ կառավարութիւնը թոյլ չէր տալիս հայ մանուկներ տանել այնտեղ: Նոյն թղթակիցը իւր վերջին նամակով (28 հ. - ում) յայտնում է այժմ, որ արդէն 16 մանուկներ բերուած են Ուսհայից և մտադրութիւն կայ նոցա թիւը մինչև յիսուն և եթէ կարելի է աւելի, հասցնելու: Նոյնպիսի մի որբանոց կայ նաև Պրուսայում: Բազելի միսիոնարների խնամքի ներքոյ, ուր ևս հայ մանուկներ սնուցանուած են:

Նոյն թերթի 28 հ. - ում մի նկատողութիւն կայ, ուր ակնարկելով, թէ ինչքան աւելի թոյլ է ներկայ Եւրոպական քրիստոնէութեան համակրութիւնը հայերի համար, համեմատած նորա հետ, որ այս դարի սկզբում գէպի խորտակեալ յոյներն արտայայտուեցաւ՝ մէջ է բերուում այն ժամանակուայ գերմանացի նշանաւոր գրող Հաուֆի մի շարադրութիւնից հետեւեալ հատուածը՝ իւր ժամանակակիցներին վերաբերեալ. «Եւ, հարցրեց Պետրոսը, պատերազմ ամենևին չկայ:—Մի քիչ, բայց շուտով բոլորը կվերջանայ. Եունաստանում է՝ թուրքերի դէմ:—Այ, այդ գեղեցիկ է, բացականչեց ասպետը՝ քարէ բուռնեցքը սեղանին խփելով: Շատ տարիներ առաջ արդէն ես այնչափ վրդովուում էի, որ քրիստոնէայ աշխարհն այնպէս անգութ կերպով դիտում էր, թէ ինչպէս մահմեդականը այդ պատուական ժողովրդին կապանքների մէջ էր պահում: այդ գեղեցիկ է, յիրաւի, Դուք գեղեցիկ ժամանակի մէջ էք ապրում և ձեր սերունդն աւելի աղնիւ է քան կարծում էի: Արեւմտ Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Սպանիայի և Անգլիայի ասպետները ելին են, ինչպէս երբեմն Քիչարդ Առեւծասիրտի օրով անհաւատների դէմ կռուելու: Ջենովական նաւատորմիցը Արշիպելագոսի վերայ է հազարաւոր մարդիկներ ափ հանելու, գաղղիական արքայանիշը մօտենում է Ստամբուլին և աւստրիական դրօշակը ծածանուում է առաջին շարքերում: Հա, այդպիսի կռուի համար ես ինքս կցանկայի մի անգամ ևս ձի հեծնել, իմ Դուրանդէ թուրը քաշել և իմ մարտի փողը փչել, որպէս զի բոլոր

ննջող հերոսներն էլնեն իրենց գերեզմաններից և երթան ինձ հետ պատերազմի Տաճկաց դէմ:—Աղնիւ ասպետ, պատասխանեցի ես՝ կարմրելով իմ ժամանակի համար, ժամանակները փոխուել են: Ձեզ հաւանականաբար կձերբակալէին ներկայ պայմաններում, տիրող օրէնքների համաձայն՝ իբրեւ ռամկավարի: որովհետեւ ոչ Հարսուրդի գրօշակը՝ ոչ գաղղիական արքայանիշը, ոչ Անգլիոյ տաւիղը և ոչ սպանական առիւծները կարելի է տեսնել մարանշողների մէջ:—Ո՞վ է ուրեմն կիսալուսնի դէմ կռուողը, եթէ ոչ սոքա:—Իրենք Յոյները:—Յոյները, կարելի է միթէ, բացականչեց Յովհաննէսը: իսկ պետութիւնները, ինչով են նոքա զրադուած:—Նոցա ղեսպանները գեւ բարձրագոյն Գըրան մօտ են:—Մարդ, ի՞նչ է ասածդ, վրայ բերաւ Ռոլանդը, զարմանքից քարացած: Կարելի է միթէ անտես անել մի ժողովրդի որ իւր ազատութեան համար կռուում է, Սո՛ւրբ Տիրամայր, այս ինչպիսի աշխարհ է: Արդարեւ քարի գութը կարող էր այստեղ շարժել:—Անրջին խօսքերն արտասանելիս նա բարկութեամբ ձմիկ արծաթէ բաժակն ինչպէս բարակ թիթեղ, մինչ գինին բարձր մինչև առաստաղ ցայտեց, ելաւ շառամամբ սեղանի մօտից, առաւ գէնքերն ու մօայլ հայեացքով ճարձատող քայլերով գուրս գնաց սրահից:»

Կ. Վ.



## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ - ՊԵՏԱԿԱՆ.

ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ԳԻՒՏ Ս. ԷԶՄԻԱՅՆԻ ՄԱՏԵՆԱԿԱՐԱՆՈՒՄ.

Ա. ԵՒ Բ. ՄՆԱՅՈՐԴԱՅՑ ԳՐԲԵՐԻ ԸՍՈՐԵՐԷՆԻՏԸ  
ՀԱՅ ԹԱՐԳԱՐԱՆՈՒԹԻՒՆԸ.

Հայանի է, որ Աստուածաշունչ մատուանը թարգմանուել է մեր նախնիքներից երկու անգամ՝ նախ Ասորերէնից և ապա Եունարէնից: Սակայն մինչև այսօր միջ հասած Ս. Գրքի զըշտղիրները, որպէս և հետեւաբար բոլոր տպագիրները, Եունականից թարգմանութիւնն են ներկայացնում: Արդարեւ, քննական զրականութեան մէջ այլ և այլ ժամանակ նրկատուած են եղել ենթադրութեամբ Ասորերէնի թարգմանութեան հետքեր Հայ Աստուա-

\* Միջնադարեան Ռոլանդի մասին է խօսքը:

ծաշնչի առանձին բառերի ու նախադասութիւնների մէջ, բայց ամբողջ հատուածների զուխներ կամ զրբեր մինչև այժմ դեռ չէ յաջողուել դանել: \* Զրադուելով երեք շաբաթի չափ Ս. Իշմիածնի մատենադարանում և նիւթեր ժողովելով Ս. Խորենացու պատմութեան վերաբերեալ երկրորդ հետազոտութեան համար, նիւթեր, որոց մէջ Ս. Գիրքը ինչպէս ևս կարծիք եմ՝ յայտնել, նոյն պատմագրի կարեորագոյն աղբիւրներից մէկն է— ևս գտայ բախտաւոր զիպուածով մի զրչագիր Աստուածաշնչի մէջ՝ № 176 ըստ Կարինեանցի ցուցակի, մինչև այսօր բնաւ անծանօթ և սովորական հայ թարգմանութիւնից ըլլողովին տարբեր մի այլ թարգմանութիւն, և այն՝ միայն Ա. և Բ. Մնացորդաց զրբերի մէջ պահուած: Աստուածաշնչի այդ հազուագիւտ զրչագիրը այլ զրչագիրների հետ միասին գտնվում է Մայր Աթոռի մատենադարանի առաջին դահլիճում, ուր պարապում է երկար ժամանակ Ս. Գրքի զրչագիրների բաղդատութեամբ տպագրելու համար Հ. Եղիա Հասան-Ջալալեանցը: \*\* Արժանապատիւ Հ. Եղիան նկատած լինելով հանգերձ № 176 զրչագրի և յատկապէս Ա. և Բ. Մնացորդաց զրբերի տարբեր ընթերցմունքները, բայց զիտաւորութիւն ունենալով միայն Բունականից արած սովորական հայ թարգմանութեան զրչագիրների համեմատութիւնը, կարեորութիւն չէր տուել այդ եզա-

\* Թարգմտի ուսուցչակետը անուշադիր է թողնում պրոֆ. Փետտէրի կարծիքը, որ Առ Կորնթացիս Գ. անվանեալ Թուղթի իւր յարակիցներով ասորեթէն Թարգմանութեան մասցորդ է համարել: տես. Der Dritte Korintherbrief, Wien. 1894. p. 30.

Կ. Վ.

\*\* Որպէս զի այս խօսքերը Թիւրիմացութեանց առիթ չտան, կարեւոր ենք համարում աւելացնել, որ Հայր Եղիան Վենափառ Հայրապետի հրամանաւ ամիսներ է ի վեր զբաղուած լինելով ձեռագիր աստուածաշունչների համեմատութեամբ, նկատել էր ինչպէս ինքը պատմում է, Մնացորդաց զրբերի այս օրինակի մէջ սովորականից ունեցած խոշոր տարբերութիւնը և մտադիր էր զեկուցանել այս մասին Նորին Վենափառութեան, երբ մատենադարան է գալիս Գ. Խալաթեանը ևս նկատեցրեալ Նորա զբաղմունքով: Հայր Եղիան ցոյց է տալիս իւր նկատածը, և Գ. Խալաթեան շտապում է Վենափառ Հայրապետից այս, արդարեւ կարեւոր, գիտի հրատարակութեան իրաւունքն առնել:

Կ. Վ.

կան օրինակի խոշոր տարբերութիւններին: Ասում եմ եզական, որովհետեւ աչքից եմ անցրել ևս այնուհետեւ Մայր Աթոռում զրտնուած Աստուածաշնչի երեք սնից աւելի զրչագիր օրինակները, բայց և ոչ մէկի մէջ չեմ նկատել այս նորագիւտ թարգմանութեան հետքերը: Վերջինիս լեզուից երևում է, որ թարգմանութիւնը հին է և ընտիր և կատարուած է ամենայն հաւանականութեամբ Ասորեթէնից: Թէպէտեւ Ասորական Աստուածաշնչի բնագիրը և այլ անհրաժեշտ զրտածքներ ձեռքիս տակ չունենալուս պատճառով անկարող եմ առայժմ վերջնականապէս վճռել այս թէ՛ Հայ և թէ՛ Ասորի զրականութեան համար վերին տալիճանի հետաքրքրական խնդիրը, թողնելով դորա մասին որպէս և դորա հետ կապ ունեցող այլ կարեւոր հարցերի վերաբերմամբ, բուն յիշատակարանի՝ այն է Ա. և Բ. Մնացորդաց զրբերի լիակատար հրատարակութեան միջոցին խօսելու հանգամանօրէն: Հրատարակութիւնը յոյս ունիմ աւարտել մինչև ներկայ տարոյս վերջը: Իսկ մինչ այն՝ իբրեւ նմուշ, առաջ եմ բերում բանասէրների համար մի քանի հատուած նորագիւտ թարգմանութիւնից զրչագրի ձշտիւ պահպանուած ուղղագրութեամբ՝ զիմացը նշանակելով սովորական տպագիր թարգմանութիւնը ըստ հրատարակութեան Զահարիի Վենետիկ. 1805:

Այս նշանաւոր գիւտի մասին ևս պատիւ ունեցայ յուլիսի 6-ին առանձին զեկուցումն ներկայացնել Նորին Վեհափառութեան ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ իւր զոհունակութիւնը յայտնելով այս առթիւ, բարեհաճեց թոյլատրութեան իրաւունք շնորհել ինձ տպագրելու Ա. և Բ. Մնացորդաց զրբերը ըստ նորագիւտ թարգմանութեան՝ հանգերձ կարեւոր զիտնական լուսաբանութիւններով: Այս մասին, որպէս և մինչև այսօր Ս. Իշմիածնում իմ գտած համակրալիւ ընդունելութեան համար, յայտնում եմ այսու Նորին Վեհափառութեան իմ որդիական ամենախորին երախտագիտութիւնս:

## ԳՐԱԳԻՐ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ Ս. ԷԶՄԻԼԻՆԻ

№ 176

(Նորագիտութեան Թարգմանութիւն)

Գիրք Առաջին Մնացորդաց, էջ. զը. 196ա.

Գլուխ Ժ.

Եւ այլազգիքն հասնալ պատերազմ տաին ընդ իւրայէլ և ի փախուստ դառնայր գունդն իւրայէղեան յերեսաց այլազգեացն և զհետ մտեալ էին այլազգիքն շաւուղի և որդւոց նորա. և հարին այլազգիքն զյովնաթան և զամինադարն և զմիսուէն զորդիսն շաւուղի և ծանրացաւ պատերազմն ի վերայ շաւուղի և եկին հասն նմա աղեղնաւորք և արգելին զնա Խօսել սկսաւ շաւուղ ընդ զինակրին իւրում և ասէ. ա՛ռ ի վեր զսուսեր քո և սպան զիս զի մի եկեսցեն հասցեն անթլփատքն և խաղ առնիցեն զիս. և ոչ կամէր առնել նա զհրամանս շաւուղի զի երկնէր յոյժ. ապա եհան շաւուղ զսուսերն իւր և զիւրովի չոգաւ. Իբրեւ ետես զինապետն թէ մեռաւ շաւուղ և ի նքնն ի սուր իւր և անդէն մեռաւ. Մեռաւ շաւուղ և երեքին որդիք իւր յաւուր յայնմիկ. և ամենայն տուն նորա միանգամայն սատակեցան. Իբրեւ տեսին ամենայն այր իւրայէղեան որ ի հովիտս անդ էին, եթէ փախեաւ ամենայն գունդն իւրայէղացոց և մեռաւ շաւուղ և որդիք իւր, թողին զիւրաքանչիւր քաղաքս և փախեան. և եկին այլազգիքն և մօրն բնակեցան անտէն ի նոսա. Եւ եղև ի վաղիւ անտր եկին ի իջին ի տեղի պատերազմին գիակապուտ լինել այլազգիքն. և եկին գտին զշաւուղ և զորդիսն անկեալ ի մէջ գիակացն ի լերին գեղրուէ. մերկացին զնոսս և առին զզէնս նոցա յիւրեանս և հատին զզլուսն նոցա և առաքեցին ընդ ամենայն կողմանս այլազգեաց և յղեցին աւետաւորս ընդ ամենայն կուռս պաշտամանց նոցա և տարան եղին զզէն և զզլուսն ի մեհեանս իւրեանց ի տանն դագոնայ. Եւ լուան շուրջ բնակիչքն յարիս գաղաղայ զամենայն գործս զոր գործեցին այլազգիքն ընդ շաւուղ և ընդ որդիսն և ընդ իւրայէղի Յարեան [էջ 196 բ] վաղվադակի ի իջին ի գաղաղայ և առին զգիակունս շաւուղի և զորդոցն և բերին թաղեցին զոսկերս նոցա ընդ կաղնեաւս յարիս. և պահեցին աւուրս եւթն. Եւ մեռաւ սաւուղ յանօրէն իւր զորս անօրինեցաւ ի տէր. ըստ բանին տեսան զի ոչ պահեաց. վասն զի եհարց սաւուղ վհկաւն խնդրել. և պատասխանի արար նմա սամուէլ մարգարէ. և ոչ խնդրեաց զտէր. և սպան զնա. և դարձոյց զթագաւորութիւնն դաւթի որդւոյ յեսսեայ.

## ՏՊԱԳԻՐ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

(Հրատարակութիւն Զոհրաբի)

Գիրք Առաջին Մնացորդաց, էջ 274—275.

Գլուխ Ժ.

Եւ այլազգիք պատերազմեցան ընդ իւրայէլի և փախեան յերեսաց այլազգեացն. և անկան վիրաւորք ի լերինս գեղրուայ. Եւ պնդեցան այլազգիքն զհետ սաւուղայ և զհետ որդւոցն նորա և հարին այլազգիքն զյովնաթան և զամինադար և զմեղքիսաւ զորդիսն սաւուղայ. Եւ ծանրացաւ պատերազմն ի վերայ սաւուղայ և գտին զնա աղեղնաւորք արեղամիք և ցաւութիւն և մտանգեցաւ յաղեղանցն. Եւ ասէ սաւուղ ցկապարճակիրն իւր. ձգեա՛ զսուր քո և խոցեն զիս դովաւ. մի գուցէ եկեսցեն անթլփատքն այնոքիկ և խաղացեն ինեւ. Եւ ոչ կամեցաւ կապարճակիրն նորա՝ վասնզի երկեաւ յոյժ. և առ սաւուղ զսուրն և անկաւ ի վերայ նորա և ետես կապարճակիրն նորա թէ մեռաւ սաւուղ և անկաւ և նա ի վերայ սուրն իւրոյ և մեռաւ. Եւ մեռան սաւուղ և երկոքին որդիքն իւր յաւուր յայնմիկ. և ամենայն տուն նորա միանգամայն մեռան. Եւ ետես ամենայն այր իւրայէլի որք ի հանգրուանսն էին, եթէ փախեաւ իւրայէլ և եթէ մեռան սաւուղ և որդիք նորա թողին զքաղաքս իւրեանց և փախեան. և եկին այլազգիքն և բնակեցան ի նոսա. Եւ եղև ի վաղիւն՝ եկին այլազգիքն կողոպտել զվիրաւորսն և գտին զսաւուղ և զորդիս նորա անկեալս ի լերինս գեղրուայ, մերկացուցին զնա. և առին զզլուսն նորա և զզէն նորա և առաքեցին յերկիր այլազգեաց, շուրջանակի աւետարանել կուռն իւրեանց՝ և ժողովրդեանն. և եղին զզէն նորա ի տան աստուծոյն իւրեանց. և զզլուսն նորա եղին ի տան դագոնայ. Եւ լուան ամենեքեան որ բնակեալ էին ի գաղաղայ, զոր ինչ արարին այլազգիքն ընդ սաւուղ և ընդ իւրայէլ. և յարեան ի գաղաղայէ ամենայն արք զօրաւորք և առին զմարմինս սաւուղայ և զմարմինս որդւոց նորա և բերին յարիս և թաղեցին զոսկերս նոցա ընդ կաղնեաւս յարիս. և պահեցին աւուրս եւթն. Եւ մեռաւ սաւուղ յանօրէն իւր զորս անօրինեցաւ ի տէր. ըստ բանին տեսան զի ոչ պահեաց. վասն զի եհարց սաւուղ վհկաւն խնդրել. և պատասխանի արար նմա սամուէլ մարգարէ. և ոչ խնդրեաց զտէր. և սպան զնա. և դարձոյց զթագաւորութիւնն դաւթի որդւոյ յեսսեայ.

Գրադիր

Ա. Մնացորդաց, զԼ. ԺԸ (էջ գրչ. 200ա)

Եւ եղև յետ այսորիկ հարկանէր վանէր դաւիթ զայլազգիսն և հանէր ի ձեռաց նոցա զգէթն և զգատերս նորա ի ձեռաց այլազգեաց. և հարկանէր վանէր զմովսւնս և լինէր մովսւր ծառա դաւիթի պաշտել պատարագաւք. Ապա հարկանէր վանէր դաւիթ զաղրիաղար արքայ սուրբայմաթ, ի ժամանակի իրրև յարուցեալ գայր զնել զձեռն իւր ի վերայ գետոյն Եփրատու. և առնոյր դաւիթ զնորա Ռ. կառս ոսկիապատս և ԷՌ. հեծեալ, և քսան հազար հետեակ. և քակէր. քանդէր զայն և թողոյր իւր անտի Ճ. կառս ի սպաս. Ապա դարձեալ գայր հասանէր արքայ ասորեստանի ի կողմանց դամասկոսի ի թիկունս աղրիաղարու արքայի սուրա. դարձեալ հարկանէր վանէր դաւիթ զասորիսն ի քսան և յերկու հազար այր պատերազմող և զաշխարհն ի հարկի կացուցանէր. և շինէր պարհակ ի դամասկոս ասորեստանեաց և կախն նմա ի ծառաութիւն բերել նմա պատարագս հանապազորդս. և առնոյր դաւիթ զմանեակն ոսկիս ի ծառախցն աղրիաղարու և բերէր զնոսա յերուսաղէմ. և ի դարաթայ և յայլոց ընտիր ընտիր քաղաքացն աղրիաղարու առնոյր դաւիթ արծաթ և արոյր և պղինձ բազում յոյժ. ուստի և առնէր իսկ սողմոն զծովն պղնձի և զսիւնս պղնձիս և զայլ ամենայն սպասս պղնձիս. Ապա իրրև լուաւ թովա արքա՝ արքա եմաթաւ, եթէ վանեաց սատակեաց դաւիթ զամենայն զօրութիւնն աղրիաղարու արքայի սուրայ և առաքեաց նայ զաղորամ զօրդի իւր առ դաւիթ, աղաչէր զնայ ի խաղաղութիւն և օրհնել զնայ. զի հարկանէր վանէր զաղրիաղար, զի այր էր նա խռովիչ մարտիկ պատերազմող և վանէր զաղրիաղար դաւիթ և առնոյր զամենայն սպասս զոսկո և զարծաթ և պղնձոյ, և բերէր դաւիթ զամենայն սպասք զոսկո և զարծաթ յամենայն ազգաց հեթանոսաց. յեղովմայեցւոցն և ի մովսրացոցն, և յօրդւոցն ամոնա և այլոց ազգաց ամաղեկացւոցն. Եւ աբեսեսա որդի շարուհեայ հարկանէր վանէր զկողմանս եղովմացոցն ի հովիտս աղախցն յութ և ի տանս հազար. և անդ շինէր պարհակ. և պարհակապանս կարգէր. և կախն եղովմայեցիք ի ծառայութիւն դաւիթի յամենայն յօր և հրամանէր նոցայ. Եւ թագաւորեաց դաւիթ ամենայն ի վերայ իսրայէլի. և առնէր զիրաւունս և զարդարութիւն յամենայն ժողովրդեանս. Եւ յովաբ որդի շարուհեայ սպարապետ նորա և յովսափաթ որդի պեւլովթ յիշատակաց զպիր, և արիւղովթ և արիմեւէք, որդիք սաղովմա քահանայք նորա և շուշա զպրապետ նորայ, և բանէ որդի յովիդաէ ի վերայ ելիմտի. և որդիքն դաւիթի առաջինքն ի ձեռն թագաւորի:

Տպագիր

Ա. Մնացորդաց, զԼ. ԺԸ (էջ. տպ. 287—288).

Եւ եղև յետ այսորիկ՝ եհար դաւիթ զայլազգիսն, և վանեաց զնոսա. և առ զգէթ և զգետօս նորա ի ձեռաց այլազգեացն. Եւ եհար զմովսւր. և էին մովսրացիքն ծառայք դաւիթի բերել ընծայս. Եւ եհար դաւիթ զաղրաաղար արքայ սուրայ ի յեմաթ, յերթալ նորա հաստատել զձեռն իւր ի վերայ գետոյն եփրատայ. և առ դաւիթ զնորա հազար կառս՝ և եւթն հազար ձիոց՝ և քսան հազար արանց հետեակաց. և քակեաց դաւիթ զամենայն կառսն, և եթող ի նոցանէ հարիւր կառս. Եւ եկն ասորին ի դամասկոս՝ օգնել աղրաաղարայ արքայի սուրայ. և եհար դաւիթ յասորեացն քսան և երկու հազարս արանց, և եղ դաւիթ ամբոց յասորիս ի դամասկոսի. և էին դաւիթի ծառայք՝ բերել նրմա ընծայս. և ապրեցոյց տէր զդաւիթ յամենայն տեղիս ուր և երթայր. Եւ առ դաւիթ զմանեակն ոսկեղէնս. որ էին ի ծառայսն աղրաաղարայ, և երբ զայն յերուսաղէմ. Եւ ի մատերեթայ, և յընտիր ընտիր քաղաքացն աղրաաղարու առ դաւիթ պղինձ բազում յոյժ. և ի նոցանէ արար սողմոն զծովն պղնձի և զսիւնսն, և զկահանս պղնձիս. Եւ լուաւ թովա արքայ եմաթայ եթէ եհար դաւիթ զամենայն զօրութիւնն աղրաաղարայ արքայի սուրայ. և առաքեաց զզուրամ զօրդի իւր առ արքայ դաւիթ հարցանել զնմանէ ի խաղաղութիւն. և օրհնել զնա. վասն զի պատերազմ տայր ընդ նմա աղրաաղար, և եհար զնա. քանզի այր թշնամի էր թովա՝ աղրաաղարայ, և ամենայն անօթք ոսկեղէնք և արծաթեղէնք ի ձեռս նորա, և զայնոսիկ սրբեաց դաւիթ տեսան ընդ արծաթոյն և ոսկեոյն զօր առ յամենայն ազգացն. եղովմայ, և ի մովսրայ, և յօրդւոցն ամոնայ, և յայլազգեացն, և յամաղեկայ. Եւ արեսսա որդի սարուհեայ եհատ զեղովթ ի հովտին ելովմայ՝ ութուտանս հազար. և եղ ի հովտին ամբոց. և էին եղովմայեցիք ծառայք դաւիթի և փրկեաց տէր զդաւիթ յամենայն տեղիս ուր և երթայր. Եւ թագաւորեաց դաւիթ ի վերայ ամենայն իսրայէլի. և էր՝ առնել իրաւունս և արդարութիւն ամենայն ժողովրդեան իւրում. Եւ յովաբ որդի սարուհեայ ի վերայ զօրացն. և յոսափաթ որդի արիւղովթայ, և արիմեւէք որդի արիմաթարայ՝ քահանայք, և սուսա զպրապետ. Եւ բանեաւ որդի յովիդայայ ի վերայ բերեթեայն և փիլէիթեայն, և որդիք դաւիթի առաջինք փոխանորդք արքայի:

Գրագիր

Ա. Մնացորդաց, զԼ. Ի (էջ 402, 200 ք- 201ա),

Եւ եղև յամի միւսում ի ժամանակս չուց թագաւորացն, առ յովար սպարապետն զօրացն դաւթի զամենայն զօրս իւրայեղացոց, և անգանէր տարածէր ընդ երկիրն ամենացոց, հարկանէր և յապականութիւն դարձուցանէր, Լպա եկն յովար և նստաւ զհաւարաւ պաշարել զնայ. և դաւիթ նստէր ի ներքս յերուսաղէմ, և հարկանէր վանէր յովար սպարապետն դաւթի զհաւարայն և առնոյր զնայ. և առեալ դաւիթ զպսակ թագաւորին նոցա ի գլխո նորա ի զլուխ իւր զնէր ինքն. և կշիռ պսակին քանքար մի ոսկի, և ի նմա ակունք պատուականք. և էր այն պսակ ի գլուխ դաւթի զամենայն աւուրլս կենաց իւրոց և զառ զպուր զաւար քաղաքին բերէին կուտէին յոյժ. և զօրսն հանեալ կոտորէին սուսերօք և սակրօք, և ի տատասկ երկաթիս. և այսպէս առնէր դաւիթ ընդ ամենայն որդիսն ամոնայ. և ապա զառնայր դաւիթ և ամենայն զօրքն յերուսաղէմ, Եւ եղև յետ այսորիկ լինէր գործ պատերազմի ընդ այլազգիսն գազեր. յայնմ ժամանակի հարկանէր վանէր սուրարի եսթեանց զսափի որ յորդոց սկայիցն էր, և անդէն նկուռ յերկիր յործանէր, և նոքա ի պարտութիւն մատնէին, Եւ եղև դարձեալ պատերազմ ընդ այլազգիսն, և հարկանէր վանէր եղիանան որդի յայիր զաթոմի զեղբայր գողիադու, և բուն նիզակի նորա իրրև զվերտորի ոստայնակաց, Եւ եղև դարձեալ գործ պատերազմի ի գէթ. և անդ էր այր մի յաղթանդամ և մատուցը ոտից և ձեռաց նորա վեց վեց. և էր այրն ի սկայից տոհմէ անտի, և ըստ գունդն արտաքս ելեալ զնէր նախատինս զօրացն իւրայեղացոց, ապա անդրէն հարկանէր վանէր զնա յովնաթան որդի սամայ եղբօր դաւթի, այս այն սկայք չորք էին, որք մնացեալ էին յափային ի գէթ, և անդան սատակեցան ի ձեռն դաւթի և ի ձեռն ծառայից նորա:

Բ. Մնացորդաց, զԼ. Թ. (էջ 402, 209 ք-).

Եւ տիկին հարաւոյ լուաւ զիմաստութիւնն սողոմոնի և եկն փորձել զնա յառակն օրինակաց յերուսաղէմ, և եկն առ սողոմոն և խօսեցաւ զամենայն որ ինչ կայր ի սրտի նորա, Եւ պատմեաց սողոմոն զամենայն բանս նորա անտրէն, և ոչ վրիպեցաւ բան զոր ոչ մեկնեաց սողոմոն անտրէն, Եւ ետես կիլն հարաւո զամենայն իմաստութիւն սողոմոնի և զտունն զոր շինեաց, և զծախս սեղանոցն, և զաթոռս մանկանցն իւրոց, և զկարգս պաշտաման նորա, և զհանգրծս պատմութեանի նորա, և զբերանապարիշտս և զհանգրծս իւրեանց, և զող-

Տպագիր

Ա. Մնացորդաց, զԼ. Ի. (էջ տպ. 290)

Եւ եղև ի միւսում տարւոջն յեկանել թագաւորացն, առ յովար զամենայն գունդս զօրացն, և ապականեաց զամենայն երկիր որդւոցն ամոնայ, եկին և նստան շուրջ զհաւարաւ. և դաւիթ նստէր յերուսաղէմ, և առ յովար զհաւարաւ, և կործանեաց զնա, Եւ առ դաւիթ զպսակն մեղքոմայ թագաւորին նոցա ի գլխո նորա, և գտաւ կշիռ նորա տաղանտ ոսկւոյ, և ի նմա ակն պատուական. և էր ի գլուխն դաւթայ, և աւար բազում յոյժ երեր, և զժողովուրդն որ էր ի նմա եհան. և սղոցեաց սղոցօք և ուրաքօք երկաթեօք, և այնպէս արար դաւիթ ամենայն քաղաքաց որդւոցն ամոնայ, և դարձաւ դաւիթ և ամենայն զօրն իւր յերուսաղէմ, Եւ եղև յետ այնորիկ եղև միւսանգամ պատերազմ ի գազեր ընդ այլազգիսն, յայնժամ եհար սուրաբէ ուսթացի զսեպիխաս յորդոց սկայիցն և վանեաց զնա, Եւ եղև դարձեալ պատերազմ ընդ այլազգիսն, և եհար եղեանան որդի յայիրայ զղէնի զեղբայրն գողիադու գեթացւոյ, և փայտ նիզակի նորա իրրև զստորի ոստայնակաց, Եւ եղև դարձեալ պատերազմ ի գէթ, և էր այր ոմն մեծ յոյժ, և մատուցը նորա վեց վեց, քսան և չորք, և նա էր յորդոց սկայիցն, և թշնամանէր զիսրայել, և եհար զնա յովնաթաւ որդի սամայ, որդի եղբօր դաւթայ, նոքա եղևն հոափայ ի գէթ, ամենեքեան էին արք հսկայք, և անկան ի ձեռս դաւթայ, և ի ձեռս ծառայից նորա:

Բ. Մնացորդաց, զԼ. Թ. (էջ տպ. 324).

Եւ թագուհին սարայ լուաւ զանուն սողոմոնի, և եկն փորձել զսողոմոն առաւօք յերուսաղէմ, յոյժ ծանր զօրութեամբ, և ուղտօք, որ բարձեալ բերէին խուռնիս և ոսկի բազում, և ականս պատուականս, և եկն առ սողոմոն, և խօսեցաւ ընդ նմա զամենայն որ ինչ էր ի միտս իւր, Եւ պատմեաց նրմա սողոմոն զամենայն բանս նորա, և ոչ վրիպեաց բան մի ի սողոմոնէ զոր ոչ պատմեաց նմա, Եւ ետես թագուհին սարայ զիմաստութիւն սողոմոնի, և զտունն զոր շինեաց, և զկերակուրս սեղանոցն, և զաթոռս ծառայից նորա, և զկարգս պաշտանէից նորա:

Դրամագիր

Ջակէզան զոր մատուցանէր. զարմացեալ էր և ոչ կախն ողիքն առ իւր. Ապա խօսել կալաւ ընդ թագաւորին և ասէ. Ճշմարիտ էր բանն, զոր լսէի ես յերկրի իմում վասն քո և բանից քոց, մինչև եկի և տեսի աչօք իմովք. և ահաւասիկ տեսանեմ զի կիսո կէս ոչ էր զոր պատմէին վասն իմաստութեան քո. զի աւելի է զոր տեսանեմքս, քան զայն զոր լուայն . . .

Բ. Մնացորդաց, զԼ. ԺԸ (էջ 402. 213A).

. . . Եւ ելին գնացին ախար արքայ իսրայէլացոց և յովսափաթ արքա յուգայ ի հաւմովթ զաղաադ. սկսաւ խօսել արքայն իսրայէլացոց առ յովսափաթ և ասէ. վառեցայց, կաղմեցայց պատրաստեցայց և մտից ի պատերազմ. և դու զգեցիր զհանգերձ թագաւորութեան իմոյ և կաց ի պատուի. Եւ յայլակերպ եղև արքայն իսրայէլացոց և եմուտ ի պատերազմ. և արքայն ասորոց պատուէր ետ զօրացն զօրագլխաց և ասէ. ամենեկն ձեռն մի ձգիցէք մի ի մեծ և մի ի փոքր. բայց միայն յարքայն իսրայէլի և եղև իրրև տեսին նահատակքն որ գնաին առաջի գնդին կառաք և երկփարօք զյովսափաթ. այր առն ձայն առնել սկսան և ասեն. ահա արքա իսրայէլի և պատեցին զնա. ապա ձայն երարձ աղաղակեաց և ասէ. չեմ ես արքայն իսրայէլի. և տէր ապրեցոյց զնա ի նոցանէ. և եղև իրրև տեսին զնայ նահատակքն թէ չէ նա արքայն իսրայէլի. թողին զնա և դարձան ի նմանէ. և ընդ դառնալն իւրեանց նէճման այր հաստարազուկ կորովի ձեռօք իրրև զփորձ կամեցաւ առնուլ զանձին. նետ մի ձգեաց ի խուռն գնդին և ևհար զարքա իսրայէլացոցն ընդ մէջ սրտառաջացն և ողնափողին և թափ եհան. Խօսել սկսաւ թագաւորն ընդ կառափարին և ասէ. դարձո զձեռն քո և հան ըզկառքս ի պատերազմէ աստի զի վիրաւորեալ եմ. և անդէն մրկեցաւ գունդն և ձակատն խանդարեցաւ. Եւ թագաւորն իսրայէլացոց կայր ընդգէմ ասորոց մինչև յերեկս աւուր և ընդ արևուն մտանել թափէր զօգիսն:

Բ. Մնացորդաց, զԼ. ԻԶ (զբէ. էջ 217A).

. . . Եւ շինեաց ողիա զաշտարակն յերուսաղէմ. և զդուռն անկեանն, և ի վերայ դրան անկեանն, և ի վերայ անկեանցն ձորոյն, և զօրացոյց նա գուրս գուրս բազումս. զի գրաստ բազում էր նորա ի սեփեղա և ի միւսովր. արդիւնարարքս այգէգործք ի լերինս կարմեղոս, զի այր արդիւնարա-

Տպագիր

և զպատմութեանն նոցա. և զմատուակս նորա, և զզգեստն նոցա. և զողջակէզսն զոր մատուցանէր ի տանն տեառն ի զարմացման եղև. և ասէ ցարքայ. Ճշմարիտ էր բանն զոր լուայ յերկրին իմում յազգս բանից քոց, և վասն իմաստութեան քոյ, և ոչ հաւատացի բանիցն մինչև եկի և տեսին աչք իմ. և ահա ոչ է ի կէս զոր պատմեցինն, ի բաղմութենէ իմաստութեանս քոյ զորս յաւելեր ի համբաւն զոր լուայ. . . .

Բ. Մնացորդաց, զԼ. ԺԸ. (էջ տպ. 338—339).

. . . Եւ ել արքայն իսրայէլի և յովսափաթ արքայ յուգայ յաւմովթ զաղաադ. Եւ ասէ արքայն իսրայէլի ցյովսափաթ. Ծածկեալ դիւ և մտից ի պատերազմ. և դու զգեցիր զպատմութեանն իմ. և Ծածկեցաւ արքայն իսրայէլի և եմուտ ի պատերազմ. Եւ արքայն ասորոց պատուիրեաց իշխանաց կառացն որք էին ընդ նմա և ասէ. մի պատերազմիցիք ընդ փոքու և մի ընդ մեծի. բայց ընդ արքայն իսրայէլի միայն. Եւ եղև իրրև տեսին իշխանք կառացն զյովսափաթ. և ասեն նոքա՝ սա է արքայն իսրայէլի. և շուրջ եղեն զնովաւ պատերազմել. և գոչեաց յովսափաթ. և տէր ապրեցոյց զնա. և դարձոյց զնոսա աստուած ի նմանէ. և եղև իրրև տեսին իշխանք կառացն՝ թէ ոչ է նա արքայն իսրայէլի. դարձան ի նմանէ. Եւ այր ոմն ելից զաղեղն կորովութեամբ և ևհար զարքայն իսրայէլի ընդ մէջ թողոցն և լանջաց, և ասէ ցնեբրինին. դարձո զձեռն քո և հան զիս ի պատերազմէս. վասն զի վտանգեցայ. Եւ պարտեցաւ պատերազմ յաւուր յայնմիկ. և արքայն իսրայէլի կայր ի վերայ կառացն իւրոց մինչև ցերեկոյ ընդգէմ ասորեացն. և մեռաւ ի մտանել արեգականն:

Բ. Մնացորդաց, զԼ. ԻԶ. (էջ տպ. 351—352)

. . . Եւ շինեաց ողիա զաշտարակն երուսաղէմի առ դրան ձորոյն և առ անկիւնսն. և զօրացոյց. և շինեաց աշտարակս յանապատին. և փորեաց ջրհորս բազումս. վասն զի անասուն բազում էր նորա ի սեփեղա՝ և ի դաշտին. և այգեգործք ի լերինն. և ի կարմեղոս. քանզի սիրէր զերկրագործութիւն:

## Գրչագիր

րատէր էր, և եղեն զօրք ողիա պատերազմողք, և թիւ հանգիսի նոցա ի ձեռն յայելայ որ աշխարհա-  
համար դպիր էր, և ի ձեռն ամեսիայ դատաւորի, և ի ձեռն անանիա երկրորդին արքայի, և ամենայն  
թիւ զօրազլխաց տոհմացն զօրացն որ ելանէին ի  
գործ պատերազմի ԲՈՒ. և ԶԺ. և ընդ նոսա զօրք  
պատերազմողք ԳԺՈՒ. և ԷԺՈՒ. և հինգ հարիւր այր,  
որ ի գործ պատերազմի էր ի թիկունս թագաւորին  
ի վերայ թշնամեաց, և պատրաստէր ողիա արքա  
ամենայն զօրացն վահանս, և նիզակս, և պատեանս,  
և աղեղնակապարձս, և պարսատիկս և քարինս, և  
արար ողիա յերուսաղէմ մերենայս խորհրդովք ի-  
մաստութեամբ, զի լիցին ի վերայ անգեանցն բա-  
ղիստս և վէմս մեծամեծս, և և լու եղև պատ-  
րաստութիւն այն մինչև ի հեռաստան, և բարձրա-  
ցաւ սիրտ նորա և մեծամեծաց, զարձաւ յապակա-  
նութիւն անօրինել առաջի տեառն, և եկն եմուտ  
նա ի տաճարն տեառն մատուցանել խունկս ի վե-  
րայ սեղանոյն խնկոց ...

## Տպագիր

Եւ եղեն ողիայ զօրք որք առնէին պատերազմս, և ե-  
լանէին ի մարտ գունդք. և թիւն նոցա ի ձեռն յե-  
լի զպրապետի, և մասեայ դատաւորի, և ի ձեռն  
անանիայի փոխանակի արքայի, ամենայն գունդք ցե-  
ղապետիցն զօրաց ի պատերազմին երկու հազար վեց  
հարիւր, և ընդ նոսա զօր պատերազմող, երեք հա-  
րիւր հազար, և եւթն հազար, և հինգ հարիւր,  
նոքա էին որք առնէին պատերազմ զօրութեամբ մե-  
ծաւ օգնական լինելով արքային՝ ի հակառակորդացն,  
և պատրաստէր նոցա ողիաս ամենայն զօրուն, վա-  
հանս և նիզակս և սաղաւարտս և զրահս և աղե-  
ղունս և պարսս ի քարինս, և արար յերուսաղէմ  
մենքենայս արուեստից ճարտարութեան լինել ի վե-  
րայ պարսպաց, և ի վերայ անկեանց, ձգել նետս և  
քարինս մեծամեծս, և և լսելի եղև պատրաստու-  
թիւն նորա մինչև ի հեռաստան, վասն զի սքանչե-  
լի էր նա յօգնել մինչև զօրացաւ, և ի բրե զօրա-  
ցաւ՝ բարձրացաւ սիրտ նորա առ յապականել, և ա-  
նիրաւեցաւ ի տէր աստուած իւր, և եմուտ ի տաճա-  
րն տեառն ծիսել խունկսի վերայ սեղանոյ խնկոց....

Ի վերջոյ պարտականութիւն եմ համա-  
րում իմ անկեղծ շնորհակալութիւնս յայտ-  
նել Ս. Էջմիածնի Միաբան շնորհունակ  
Գալուստ Տէր Մկրտչեանին, որ Եւրոպացի  
և Հայ բանասէրներին արդէն ծանօթ  
իւր սիրայիր պատրաստականութեամբ ամեն  
կերպ աջակցութիւն ցոյց տուեց ինձ Մայր  
Աթոռի գրչագիրներով զբաղուելուս միջոցին:  
Ձեմ կարող մոռանալ և ս. Էջմիածնի զբաղա-  
րանի հմուտ մատենապետ արժանապատիւ հ.  
Սահակ Ամատունուն, որ բազմիցս օգնեց ինձ՝  
զիւրացնելով գրչագիրների արտագրութեան  
գործը: Սոցա եռանդուն աջակցութեանն եմ  
պարտական թէ՛ ընդարձակ ընդօրինակութեան  
և թէ՛ մանաւանդ այն մանրակրկիտ համեմա-  
տութիւնների համար, որ կատարել ենք միա-  
սին՝ Մնացորդաց նորագիւտ զբեքերը տպագիր  
Աստուածաշնչի հետ բաղդատելիս:

Գր. յտալաթեանց.

Տ. յուլիսի, 1896 թ.  
Ս. Էջմիածն.

ՄԻ ՀԱՏՈՒԱԾ ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ  
ՊԼՏՄՈՒԹԻՒՆԻՑ.

Խորենացու պատմութիւնը եռանդուն  
ուսումնասիրութեան ու ամենակենդանի հե-  
տաքրքրութեան առարկայ է այժմ: Դրբե մի  
նոր ապացոյց, թէ այս նշանաւոր գործի մա-  
սին նորանոր տեսութիւններ կազմելուց առաջ  
ինչքան կարեւոր է ժողովել ուսումնասիրել  
և ի մի ամփոփել մեր մատենագրութեան մէջ  
գտնուած նորան վերաբերեալ նիւթերը, ձե-  
ռագիրների համեմատութեամբ մի վստահելի  
ընազիր լոյս ընծայել հրատարակում ենք ներ-  
կայ հատուածը: Ծա արտատպուած է Մայր  
Աթոռի մատենադարանի այն նշանաւոր եր-  
կաթագիր ձեռագրից (Գէորգ կաթողիկոսի  
ժողովածուի հ. 102), որի մասին մի քանի  
անգամ արդէն խօսք եղել է Արարատի մէջ:<sup>\*</sup>  
Նորա վերնագիրն է՝ Մովսէսի Խորենացւոյ և  
Անդրէասի, և այնտեղ, ուր ներկայ հատուա-  
ծը վերջանում է, լուսանցքում նշանակուած  
«Անդրէասի» խօսքը միայն ցոյց է տալիս, որ  
նոր հատուած է սկսուում Անդրէասի ինչ-  
պէս և նորա շարունակութիւնը կազմող Կայ-  
սերաց պատմութեան մասին գրել է արդէն  
և այդ թէ՛ առհասարակ պատմութեան և թէ՛